

ԼԵԶՎԱԳԱՏՃԵՆՈՒԽԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԵՒԱԿԵՏԱՅԻՆ ԶԱՓԱՆԵՇԻ ՄԱՍԻՆ

(XIX դարում ֆրանսերենից գրական արևմտահայերեն
պատճենված բառամիավորների հիման վրա)

Ա. Կ. ԲԱՐԵՋԻՋՅԱՆ

Լեզվի հարստացումը բոլոր ժամանակներում դիտվել է նախ և առաջ որպես բառապաշարի համալրում: Բառապաշարային նորարարությունների մեջ պետք է հստակ զատորոշել՝ 1) օտար ազդեցությունից անկախ, ներքին բառակերտմամբ ստեղծված միավորները և 2) օտար ազդեցությամբ երևան եկած միավորները, որոնք բաժանվում են երեք ենթաշերտի՝ ա) բառափոխառություններ, բ) ազատ թարգմանությամբ ստեղծված նորակազմություններ, գ) պատճենումներ (բառի, կայուն բառակապակցության, նշանակու-թյան):

Լեզվապատճենումների ստեղծմանն ու տարածմանը ամենից ավելի խթանում են օտար հեղինակների գրական երկերի ու գիտական աշխատու-թյունների թարգմանությունները և երկլեզվյան բառարանագրությունը: Այս-պիսով, պատճենումները գերազանցապես կերտվում են գրավոր խոսքում, գրականության մեջ և քիչ թե շատ գրքային, գիտական դրոշմ են կրում, մանավանդ՝ գործածության սկզբնական շրջանում: Դա զգալի է հատկապես այն պատճենումներում, որոնց բովանդակությունը ցայտուն արտահայտում է օտար լեզվամտածողությունն ու ժողովրդի ոգին, նրա մշակույթը, բարքերը, կենցաղը: Այս առումով, «չեզոք» պատճենումները, ընդհակառակը, ավելի դյուրընկալ են և, ի տարբերություն առաջինների, տեսականորեն կարող են ստեղծված լինել օտար ազդեցությունից անկախ: Ուստի, բնական է նաև, որ սրանց պատճենում լինելն ավելի դժվար է հաստատել:

Աչքի անցկացնելով պատճենումների մասին լեզվաբանների կարծիքները, նրանց բնորոշումներն ու առաջարկած դասակարգումները, տեսնում ենք, որ գոյություն ունի ըմբռնումների զգալի տարբերություն և, բնականաբար, տեր-մինների ու սահմանումների խախտաբեկություն, երբեմն նույնիսկ մեկ ուսումնասիրության շրջանակներում: Այսպես, պատճենումը մերթ առնչվում է տառացի թարգմանությանը¹, մերթ դիտվում կառուցվածքային հասկացու-թյուն, որից իմաստային պատճենումները դուրս են մնում կամ ընդունվում վերապահությամբ², մի դեպքում՝ կառուցվածքային հասկացություն դիտվե-լով հանգերձ, մոտեցվում է տառացի թարգմանությանը³, մեկ այլ դեպքում չի տարբերվում ազատ թարգմանությունից⁴, մերթ դիտվում է իմաստային

¹ В. В. Виноградов, Очерки по истории русского литературного языка XVIII—XIX вв., М., 1938, с. 162; С. А. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, с. 188.

² Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1958, с. 111—113; В. В. Веселитский, Отвлеченная лексика в русском литературном языке XVIII—начала XIX вв., М., 1972, с. 103—104.

³ Н. М. Шанский, Лексические и фразеологические кальки в русском языке (Русский язык в школе, 1955, № 3, с. 34—35).

⁴ Ս. Ա. Ասլանյան, Տերմինաբանության աղբյուրները հայերենում (Ակնարկներ հա-րոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Երևան, 1982, էջ 234):

փոխառության միջոց ու տարատեսակ⁵, մերթ՝ իմաստային փոխառության բառացի թարգմանություն⁶, մի դեպքում համարվում է փոխառյալ թարգմանություն⁷, մյուս դեպքում՝ թարգմանություն ըստ ձևության⁸ և կամ՝ ստուգաբանական կառուցվածքի փոխառություն⁹ և այլն, և այլն: Վերջապես, հետադոտորների մեծ մասի համար պատճենումը ինքնուրույն լեզվաբանական խնդիր չէ, այլ փոխառության մասնավոր դրսևորում¹⁰:

Մասնագիտական գրականության տեսությունը կարելի է երկար շարունակել, սակայն ասվածը բավական է համոզվելու համար, թե որքան տարբեր ու իրարամերժ են գոյություն ունեցող տեսակետները: Դրանց ծանոթանալիս ի հայտ է դառնում նաև զլխավոր թերություններից մեկը, այն, որ լեզվապատճենումների տարատեսակները նկարագրվում են մեկուսի և չեն համակարգվում երկենտային մեկ սկզբունքից բխող որևէ ընդհանուր սահմանումով:

Լեզվապատճենումը դիտելով կառուցվածքային հասկացություն, տալիս ենք նրա հետևյալ սահմանումը:

Պատճենումներ են կոչվում այն բառերը, կայուն բառակապակցություններն ու առանձին իմաստները, որոնք օտար կառուցվածքի ազդեցությամբ և և նրա ընդօրինակումով վերաբաժանվում են տվյալ բովանդակությունը՝ պատճեննող լեզվի ներքին միջոցներով ու նրանում գործող օրինաչափություններին համաձայն:

Սահմանումից բխում է, որ երկուսը հաստատող զլխավոր շահանիշները երկուսն են՝ ա) օտար ազդեցության առկայություն և բ) կառուցվածքի, կաղապարի կրկնօրինակում: Սակայն երկրորդ շահանիշն առանց առաջինի հավաստիության արժեզուրկ է, քանի որ կառուցվածքի, կաղապարի համընկնումներ հնարավոր են և կան ամենատարբեր լեզուներում՝ անկախ փոխադարձ ազդեցությունից: Հետևապես, պատճենումը հաստատող ելակետային շահանիշը օտար ազդեցությունն է: սրան գումարվում է երկրորդը՝ կառուցվածքի, կաղապարի կրկնօրինակումը, որը լրացնում և ամբողջացնում է առաջինը: Օտար ազդեցության ճշտումը դժվարանում է մանավանդ այն ժամանակ, երբ բառապաշարն ուսումնասիրվում է տարժամանակյա հայեցակետով: Բնական է, որ դրական արևելահայերենում վերջին տասնամյակներին ուսանողների հետևությամբ կազմված պատճենումներն ավելի դուրսին է նկատվում ու արձանագրվել, քան գրական արևմտահայերենի՝ XIX դարում ֆրանսերենից կատարված պատճենումները, որոնք և կազմում են մեր ուսումնասիրության առարկան: Դրանց հավաստի լինելը որոշելիս հիմնվել ենք արտալեզվական և լեզվական մի շարք տվյալների վրա, որոնք, մեր կարծիքով, ընդհանրական արժեք ունեն, և որոնց ամբողջությունը հնարավոր է

⁵ В. М. Аристова, Англо-русские языковые контакты и заимствования XVI—XX вв. (автореферат докт. дис., Л., 1980, с. 27).

⁶ Т. Бердыева, Социальный фактор в развитии и обогащении лексики таджикского языка в советскую эпоху /по материалам прессы 20—60-х годов/ (автореферат докт. дис., Душанбе, 1983, с. 24).

⁷ E. Haugen, The analysis of linguistic borrowing (Language, Oslo, 1958, vol. 26, p. 224).

⁸ О. Назаров, Развитие туркменского языка в связи с его функционированием в сфере высшего образования (Развитие национальных языков в связи с их функционированием в сфере высшего образования, М., 1982, с. 242).

⁹ Н. Н. Амосова, Этимологические основы словарного состава современного английского языка, М., 1956, с. 112.

¹⁰ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955, էջ 381, А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, с. 138: Ю. С. Маслов, Введение в языкознание, М., 1975, с. 256, P. Guiraud, Les mots étrangers, Paris, 1971, p. 99—100 և այլն:

դարձնում հաստատել որևէ լեզվում պատճենում թվացող միավորի՝ իրոք օտար ազդեցությամբ երևան եկած լինելը:

Պատճենումը հաստատող արտալեզվական տվյալներից առանձնացնում ենք հետևյալները.

ա) Բառամիավորի՝ երկլեզվյան բառարանում կամ թարգմանական գրականության մեջ հանդիպելը, քանի որ ամենից ավելի այստեղ է զգալի օտար լեզվի ազդեցությունը, նոր հասկացություններ արտահայտելու համար նրա միավորների օրինակով համարժեք ձևեր ստեղծելու անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը: Օրինակ՝ գեղագրություն—calligraphie, խորաչափություն—bathymétrie, կենսագիր—biographe, հողմաչափ—anémomètre, մառնեմանոլ—bibliomane, նախագալիք—avant-cour, շաքարեղեգն—canne à sucre և այլն:

բ) Թարգմանիչների և բառարանագիրների նշումները տվյալ միավորի՝ թարգմանության կամ բառարանագրության ընթացքում, և կամ՝ պարզապես վերջին տասնամյակներին ստեղծված լինելու մասին: Վ. Հյուգոյի «Թըշվառների» թարգմանիչ Գր. Չիլինկիրյանը վեպի հայերեն հրատարակության առաջաբանում գրում է. «Լեզվագետ ազգային միայն կրնան երևակայել թե թարգմանիչ մը որքան նեղություն և աշխատություն կը կրե այսպիսի եվրոպական գիրք մը հայերենի թարգմանելու համար: Մասնավորապես Թըշվառներու մեջ կը վխտան այս դժվարությունները, որոնց առաջինն է գտնել, կազմել, բարդել կամ հարմարցնել այնպիսի բառեր, որոնք հայ մատենագրության մեջ և բառարաններու մեջ չկան: Այս տեսակ բառերու առջև ստիպվեցանք ֆրանսերենն ալ դնել»¹¹:

Իրոք, Գր. Չիլինկիրյանը մոտ հինգ հարյուր միավորի կողքին փակագծերում նշել է նաև բնօրինակը, դրանով իսկ շեշտելով վերջիններիս նորակազմություն լինելը: Նույն սկզբունքն են կիրառել Մ. Մամուրյանը, Մ. Նուպարյանը և ուրիշներ: Այլ թարգմանիչներ նորաստեղծ բառամիավորները մատնացույց են արել շեղագիր շարվածքով կամ՝ բացատրել տողատակում: Հիշյալ եղանակները երբեմն զուգակցվել են և կիրառվել նաև պարբերական մամուլում, գիտական գրականության մեջ ու դասագրքերում: Որոշ դեպքերում տարբեր թարգմանիչներ միմյանցից անկախ նշել են միևնույն բառաձևի նորակազմություն լինելը, որն ավելի համոզիչ է դարձնում փաստը:

Ինչ վերաբերում է ֆրանսերեն-հայերեն բառարաններին, ապա նրանցում նորակերտ բառերը նշվում են աստղիկով կամ խաչանիշով: Նորայր Բյուզանդացու ֆրանս-հայերեն նշանավոր բառարանի առաջաբանում կարդում ենք. «Աստղանշանդ յայտ առնէ զնորահնար բառս կամ զնորաբանութիւնս, եւ կրկին աստղանշանդ դրառս նախնեաց որովք մեք այժմս վարիմք նորով նշանակութեամբ»¹²: Իսկ Մեքրոպ Նուպարյանի ֆրանս-հայերեն բառարանի «Կարևոր գիտելիք» բաժնում հեղինակը տեղեկացնում է. «Խաչանիշներն՝ որք թվով 5000—6000-ի կը հասնին, մեզմե կազմված բառերը կը յուցնեն, որոնց մեջ հին բառեր ևս կան մերձավոր կամ նոր առմամբ գործածված: Նույնպես խաչանիշ են մեր հետազոտության մեջ ժողոված բառեր, ինչպես նաև մերձակից գավառական բառեր՝ մեզմե հատկացված իբր պատասխանող ֆրանսերենն այս ինչ բառի»¹³: Նույն սկզբունքն են կիրառել բառարանագիրներ Մանվել Քաջունին, Միմոն Երեմյանը և ուրիշներ: Պատճենում-նորակազմություններն ավելի ակներև են այն բառահոգվածներում, ուր ֆրանսերենի դիմաց գտնում ենք միայն աստղանիշով ուղեկցվող մեկ կամ ավելի բառեր:

գ) Բառամիավորի առաջին գործածության թվականը աղբյուր լեզվում, տվյալ դեպքում՝ ֆրանսերենում: Խոսքն այն բառերի մասին է, որոնք ֆրանս-

11 Վ. Հյուգո, Թըշվառներ, հ. 1, Ջյուռնիա, 1868, էջ 3:

12 Ն. Բյուզանդացի, Բառագիրք գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Կ. Պոլիս, 1884:

13 Մ. Նուպարյան, Բառարան ֆրանսերենէ հայ-աշխարհիկ, Կ. Պոլիս, 1889, էջ 2:

սիրենում չեն եղել մինչև XIX դ. և հայերենում մեծ մասամբ կազմվել են ֆրանսերենի հետևություններ, քանի որ անվիճելի է մեր ժողովրդի արևմտյան հատվածի դրականության, մշակույթի, լեզվի ու մտածելակերպի ֆրանսիական կողմնորոշումը: Օրինակ՝ ածխաբեր-carbonifère (1846)¹⁴, աստղապաշտութիւն-astrolâtrie (1839), գողամոլութիւն-cleptomanie (1840), ինքնակենսագրութիւն-autobiographie (1842), կշռացոյց-baroscope (1866), միջատակեր-entomophage (1839), ջրաբուժութիւն-hydrothérapie (1840), սրտագիր-cardiologue (1864), փնջակալ-porte-bouquet (1869) և այլն: Այս պատճենումներն առաջին անգամ արձանագրվել են Ն. Բյուզանդացու¹⁵ և Մ. Քաջունու¹⁶ բառարաններում որպես նորակազմություններ և գոյություն չունեն հայոց լեզվի մինչև այդ լույս տեսած բացատրական ու երկլեզվյան բառարաններում: Եթե ուշադրություն դարձնենք նաև այն փաստին, որ առաջին անգամ XIX դ. գործածված բառերից շատերը ֆրանսերենում իսկ նեղ կիրառություն ունեցող ոչ հաճախագեղ պտերմիններ են՝ արձանագրված միայն լիակատար կամ մասնագիտական բառարաններում, ապա նրանց հայերեն համարժեքների ֆրանսերենի հետևություններ կազմված լինելն ավելի հավաստի է դառնում:

դ) Լեզվական միավորի՝ մեկ այլ երկրի պատմությանը, ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին կամ կենցաղին բնորոշ հասկացություն արտահայտելու: Այս դեպքում նրա՝ օտար ազդեցությամբ ստեղծված լինելը որևէ կասկած չի հարուցում: Օրինակ՝ գաղղիական աֆաղաղ-le coq gaulois, եկեղեցու զանգակատան վրա ամրացված աքաղաղի պատկերաքանդակ՝ ֆրանսիական ազգային խորհրդանշան, կնքապահ-garde des sceaux, արդարադատության նախարար Ֆրանսիայում, Մեծ Դար-le Grand Siècle, ֆրանսիացիների համար XVII դարը, կյուղովիկոս XIV-ի թագավորության շրջանը, յաղթութեան կամար-arc de triomphe, Փարիզում գտնվող նշանավոր հուշարձանը, որի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1836 թ., Վերանաշտություն-Restauration, Ն. Բոնապարտի կայսրության անկումից հետո Բուրբոնների իշխանության վերականգնումը՝ 1814 թ. և այլն:

Պատճենումը հաստատող լեզվական տվյալներից առանձնացնում ենք հետևյալները.

ա) Օտար պատճառաբանվածության (մոտիվացիայի) վերարտադրումը, նրա կառուցվածքային կրկնօրինակումը պատճենող լեզվի ներքին միջոցներով: Օրինակ՝ կենդանախոյս-centrifuge, հաղորդականութիւն-conductibilité, մենագրութիւն-monographie, ջրածին-hydrogène, սրտաբանութիւն-cardiologie, վիմագրել-lithographier և այլն:

բ) Որոշ բառամիավորների օտարաբան կազմությունը: Ինչպես նշել է Մ. Աբեղյանը, հայոց լեզվում սակավաթիվ են այն կազմությունները, որոնցում առկա է բաղադրիչ մասերի համադասական հարաբերություն՝ տեղատարափ-տեղ ու տարափ, ազգատոհմ-ազգ ու տոհմ, գունդագունդ-գունդ-գունդ

14 Փակագծերում տրվում են բառերի առաջին գործածության թվականները ֆրանսերենում: Տվյալները քաղել ենք հետևյալ բառարաններից՝ Paul Robert. Dictionnaire alphabétique et analogique de la langue française, Paris, 1970, Oscar Bloch, Walter Von Wartburg, Dictionnaire étymologique de la langue française, Paris, 1968.

15 Ն. Բյուզանդացու աշխ.

16 Մ. Քաջունու, Բազմիք արուեստից, դիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, հ. 1—2, Վենետիկ, 1891—1892:

և այլն: Այդ հարաբերությունը սովորաբար ստորադասական է: Հայերենում բաղադրության առաջին մասը ըստ իմաստի լրացնում, որոշում է երկրորդին, այլ խոսքով, բաղադրության ղլխավոր կամ հիմնական նշանակությունը երկրորդ մասի մեջ է: Օրինակ՝ Խաչատուր-հացի տուն, սեւեռնոյ-սե հող, գլխաբաց-գլուխը բաց և այլն¹⁷: Ֆրանսերենում ճիշտ հակառակն է. հմմտ. հենա-կետ-point d'appui: Մ. Աբեղյանը բերում է օրինակներ, որոնցում, հակառակ հայերենին հատուկ օրինաչափությանը, երկրորդ բաղադրիչն է դարձել առաջինի լրացումը, և դրանք դիտում օտարարան կազմություններ: Բերենք մեր օրինակները. *surhumain* excentrique և գերմարդկային-surhumain բառերը համապատասխանաբար նշանակում են «կենտրոնից դուրս գտնվող» և «մարդու ուժերից վեր», մինչդեռ սովորական բաղադրության եղանակով պիտի նշանակեին «արտաբերին, դրաի կենտրոն» և «գերապես մարդկային, շատ մարդկային»: Հմմտ. նաև՝ մասնորմ-pan de muraille, որ չի նշանակում «մասի որմ», այլ «որմի մաս», միջոտի-entre-voie ոչ թե «միջին ուղի», այլ «ուղիների միջև», տերեֆար-phylite՝ ոչ թե «տերեֆ քար», այլ «քարացած տերեֆ» և այլն:

գ) Բառահոգվածի թարգմանական մասը, որը շատ դեպքերում պարզորոշ մատնանշում է պատճենում-նորակազմության ստեղծման ուղին, երբ ժամանակագրական տեսակետից իրար հաջորդող մի շարք երկնգվյան բառարաններում օտար բառի դիմաց գտնում ենք միմիայն նկարագրական բացատրություններ, և վերջապես, ավելի ուշ լույս տեսած որևէ բառարանում, այդ նկարագրական-բացատրական ձևերի կողքին, բառահոգվածի վերջում, նաև օտար կառուցվածքը վերարտադրող որևէ բառ՝ նորակազմությունը մատնացույց անող նշանը կողքին: Այսպես՝ բեռամբեր-circumpolaire ածականն առաջին անգամ հանդիպում է Ն. Բյուզանդացու վերոհիշյալ բառարանում: Մինչ այդ լույս տեսած Հ. Ավգերյանի և Ս. Էմինյանի ֆրանս-հայերեն բառարաններում կարդում ենք. «Շուրջ զբեռնօք (երկնից)»¹⁸ և «Շուրջ զբեռնալ (երկրի)»¹⁹: Վերջապես, Ն. Բյուզանդացու բառարանում՝ «Որ կան զբեռնօք երկրի (ծովը, աստեղը)». *բեռամբեր>. ophthalmoscope-դործի ղննելոյ զներքին կողմն ական. *ակնադէտ, jeu c'e mots-խաղ ի մանութենէ ձայնից բառից. բառից խաղ. *բառախաղ, hypométrie-արուեստ չափելոյ զբարձրութիւն տեղեաց. *բարձրաչափութիւն. sémiologie-մասն բժշկութեան որ ճառէ զնշանաց հիւանդութեանց. *նշանաբանութիւն և այլն: Նման բառահոգվածները թարգմանական բառարաններին տեղ-տեղ հաղորդում են բացատրականի բնույթ և դրանով իսկ մատնանշում տվյալ հասկացությունն արտահայտելու համար անհրաժեշտ բառամիավորի բացակայությունը կամ նորաստեղծ լինելը, քանի որ լեզվում առկա ու գործածությամբ ամրացած բառերը նկարագրական բացատրությունների կարիք չունեն: Եվ պատահական չէ, որ առ բացատրությունները մեծ մասամբ ուղեկցում են նորակերտ տերմիններին՝ դրանց նշանակությունը ընկալելի դարձնելու համար, մանավանդ, եթե վերջիններիս ներքին ձևը թափանցիկ չէ ու չի հուշում բաղադրիչներից բխող ամբողջական իմաստը:

Ժամանակի նորակազմություններն արձանագրելու տեսակետից դժվար է գերադնահատել Ն. Բյուզանդացու բառարանի արժեքը, ուր հեղինակը ոչ միայն ինքն է կերտել, այլև հավաքել ու ներկայացրել է նախորդ տասնամ-

17 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 205—206:

18 Հ. Ավգերյան, Բառգիրք ի գաղղիական է ի հայ և ի տաճիկ բարբառս, Վենետիկ, 1840:

19 Ս. Էմինյան, Երեքլեզեան բառագիրք, այսինքն գաղղիերէն-հայերէն-տաճիկէն, Վիեննա, 1853:

յակների նորաստեղծ բառերն ու նշել դրանք որպես այդպիսիք: Բառարանագրի նշումների ճշտությունն ապացուցվել է սինրնդմեջ, որն օրինայաի պիտի համարել, եթե հիշենք, որ Ն. Բյուզանդագին հիսուն տառի էր նվիրել հին և միջին հայերենի մեծածավալ բառարաններ կազմելուն և քաջատեղյակ էր հայոց բառապաշարի զարգացման ընթացքին:

դ) Փոխառյալ բառի ու նրա կաղապարը կրկնօրինակող համարժեքի զուգահեռ գործածությունը, որը հաճախ մատնացույց է անում բառապաշարային կրկնակների՝ փոխառության և պատճենման գոյությունը: Օրինակ՝ ֆօթլէթ (կոտլետ)*-կոդիկ-сօlette, տանթել (դանթել)-ժանեակ-dentelle, մոնօփօլ (մոնոպոլիա)-մենավաճառութիւն-monopole և այլն:

ե) Բառամիավորի նշանակության անհամապատասխանությունը առանձին բաղադրիչներից բխող նշանակությանը, երբ առկա է ժամանակավրեպ (անախրոնիկ) պատճառաբանվածության կրկնօրինակում, որը չի արտացոլում բառի ներկա իմաստը: Օրինակ՝ եռեղջիւր-tricorne գոյականը ոչ թե «երեք եղջյուր» է նշանակում, այլ՝ «եռանկյուն, եռաձայր գլխարկ, որ դնում էին 17—19-րդ դարերում»: Այստեղ առկա է սկզբնական՝ chapeau tricorne-եռեղջյուր (եռաձայր) գլխարկ բառակապակցության գոյականական անդամի զեղչում, որի հետևանքով «եռեղջյուր» ածականը, իր մեջ խտացնելով բառակապակցության ընդհանուր իմաստը, վերածվել է գոյականի: Կաղամբաճառ-coupe-choux չի նշանակում «կաղամբը հատող», այլ՝ «կարճ սուր, դաշունասուր, որ կրում էին հետևակայինները 1831—1866 թվականներին», հռովմար-գել-paravent գոյականն ունի «վարագույր, առաջակալ» և ոչ թե «հողմը արգելող» նշանակությունը և այլն: Ինքնին հասկանալի է, որ այսպիսի բառեր հայերենում կարող էին երևան գալ միայն օտար ազդեցությամբ:

զ) Ճվալ հասկացությունն արտահայտող արդեն իսկ գոյություն ունեցող հայերեն բառի կողքին օտար միավորի կաղապարը կրկնօրինակող որևէ հոմանիշի երևան դալը: Այսպես, բուրել և արտաբուրել-exhaler, գոմ և կովանոց-vacherie, ժամանակագրութիւն և ժամանակախօսութիւն-chronologie և այլն: Նշենք, որ զուգահեռ ձևերից, որպես կանոն, ավելի կենսունակ են գործածությամբ վաղորոք ամրացած բառերը և ոչ թե պատճենում-նորարարությունները:

Վերահիշյալ արտալեզվական ու լեզվական տվյալների հնարավոր ամբողջությունը յուրաքանչյուր առանձին դեպքում թույլ է տալիս կողմնորոշվել, թե նախապես պատճենում թվացող բայերից որոնք են օտար ազդեցությամբ առաջացել:

Սակայն թվարկված տվյալներով հարցը չի սպառվում: Օտար ազդեցության ամբողջական ու վերջնական պատկերը ճշտելու համար որդեգրել ենք բառանիմֆային ու բառափնջային քննադանգի սկզբունքը, որով պատճենումներ ենք համարում օտար կառուցվածքը կրկնօրինակող և որևէ որոշակի հասկացություն արտահայտող նոր, ելակետային բառաձևերը և նրանց վրա խարսխված ու նրանցով միավորված նորամուծությունները միայն: Նլակետային հասկացություն-բառամիավորը կարող է ունենալ կամ չունենալ իր բառափունջը: Այսպես, հեռագիր-télégraphie, հեռագրական-télégraphique, հեռագրող-télégraphiste, հեռագրութիւն-télégraphie, հեռագրել-télégraphier բառափունջը խմբավորված է հեռ և գիր արմատական ձևույթների զուգորդումից առաջացած հեռագիր նորակազմ բառահիմքի շուրջը, իսկ ակնադէտ-ophthalmoscope, բիրեղակերպ-cristalloïde բառաձևերը մնացել են մեկուսի:

* Փակագծերում տրվում են արևելահայերեն ձևերը:

Պատճենումներ չենք համարում այն վերջածանցավոր ձևերը, որոնց ելահետախին բառահիմքերը հայոց լեզվում եղել են՝ ֆրանսերենի հետ ունեցած լեզվական շփումից անկախ: Այսպես, *մակերևութական ածականը կրկնօրինակում է ֆրանսերեն *superficiel*-ի կաղապարը և ն. Բյուզանդացու կողմից նշվում որպես նորակազմություն, սակայն դուրս է մնում վերոհիշյալ սկզբունքով առանձնացվող պատճենումների ցանկից, քանի որ նրա հլախետախին բառահիմքը՝ մակերևութ գոյականը, իր որոշակի ներքին ձևով, վաղուց ի վեր եղել է հայերենում: Հմտ. նաև՝ *ատամնային-dentaire *արիւնային-sanguin և այլն: Նույնը կարելի է ասել *տնտեսապէս-nominalelement, աստիճանաբար-graduellement, *բանաստեղծաբան-poëtiqnement կանոնաւորապէս-régulièrement, *չեզոքաբար-neutralelement մակբայների մասին, որոնք կազմված են հայերենում առկա համապատասխան ածականներից ու գոյականներից, կամ՝ *հարիւրապատկել-centupler, *սնդասել-satiner բայերի վերաբերյալ, որոնք հարիւրապատկել և սնդաս բառակերպի ածանցյալներն են և այլն:

Պատճենումներ չենք դիտում նաև ան-, ապ-, տար- և այլ ժխտականներով բաղադրությունները, որոնք կարող էին ինքնուրույնաբար կազմվել զուգահեռ հաստատական ձևերից, ինչպես՝ *անդարմանելի-irremédiable, *անժողովրդականութիւն-impopularité *ապօրինաբար-illegalement, *տարհամոզել-dépersuader և այլն, թեև այս և նման բազմաթիվ բառեր ուղեկցվել են նորակազմությունը մատնացույց անող որևէ նշանով: Այսօրինակ կազմությունները դիտում ենք ներքին բառակազմական գործընթացի աշխուժացման ու զարգացման արդյունք, որ բնականոն է բառակերպման միջոցներով ու արդյունավետությամբ աչքի ընկնող մի այնպիսի լեզվի համար, ինչպիսին հայերենն է:

Այսպիսով, ածականական, մակբայական, բայական և այլ ածանցյալ ձևերը պատճենումների շարքէ ենք դասում միայն այն դեպքում, երբ նրանք ի հայտ են գալիս պատճենված բառահիմքով շաղկապված նոր բառափնջի կազմում. *խոնաւաչափ-hygromètre, *խոնաւաչափութիւն-hygrométrie, *խոնաւաչափական-hygométrique, *կենսագրութիւն-biographie, *կենսագիր-biographe. *կենսագրական-biographique, եռանկիւնաչափութիւն-trigonométrie, *եռանկիւնաչափական-trigonométrique, *եռանկիւնաչափութիւն-trigonométriquement, *արսւտաւարութիւն-exportation, *արսւտաւարել-exporter, *արսւտաւարող-exportateur և այլն:

Պատճենումներ չենք համարում նաև այն կազմությունները, որոնք գոյություն ունեցող բառերի տարբերակներն են: Այսպես, souterrain-ստորերկրեայ, գետնափոր, դարափոր, *ընդերկրեայ բառահոգվածի աստղիկով նշված ընդերկրեայ նորակազմությունը արդեն իսկ առկա ստորերկրեայ բառի կաղապարը կրկնող և զուգահեռաբար գործածվող տարբերակային բառակ է միայն. նույնը՝ *ընթերադրել-juxtaposer, որը յարադրել բայի տարբերակն է և այլն:

Բառահիմքային ու բառափնջային ընտրանքի առաջարկվող սկզբունքը չկիրառելու դեպքում բառապատճենումների թիվը կարող է արհեստականորեն ավելանալ:

ОБ ИСХОДНОМ КРИТЕРИИ, ПОДТВЕРЖДАЮЩЕМ ЯЗЫКОВОЕ КАЛЬКИРОВАНИЕ

(на основе лексических единиц, калькированных западноармянским
литературным языком с французского в XIX веке)

А. К. БАРЛЕЗИЯН

Резюме

Среди основных критериев, подтверждающих явление лексического калькирования, выделяются следующие: а) иноязычное влияние, б) воспроизведение соответствующей словообразовательной модели. Но второй критерий без наличия первого не является решающим, так как в различных языках нередко встречаются одинаково мотивированные равнозначные наименования, независимо от языкового взаимовлияния, следовательно, исходным является первый критерий.